

Ծրագրի անփոփոխ փաստաթուղթ

Ծրագրի անվանում	«Հայաստանի էլեկտրական Ցանցեր»
Երկիր	Հայաստան
Ծրագրի համարը	38824
Տնտեսության ճյուղ	Էներգետիկա
Պետական/Մասնավոր	Մասնավոր
Բնապահպանական դաս	B
Խորհրդի կողմից քննարկման ամսաթիվ	Հոկտեմբերի 28, 2008թ.
Կարգավիճակ	Անցել է կառուցվածքային ուսումնասիրություն, սպասվում է վերջնական ուսումնասիրություն:
ԾԱՓ հրապարակման ամսաթիվ ԾԱՓ թարմացման ամսաթիվ	Հուլիսի 21, 2008թ.
Ծրագրի նկարագրություն և նպատակներ	<p>Առաջարկվող ծրագիրը ներառում է էներգետիկ արդյունավետության մի շարք միջոցառումների ֆինանսավորում, ինչպիսիք են՝</p> <ul style="list-style-type: none">ա) ցածր լարման հնացած ենթակառուցվածքների նորացումը և արդիականացումը,բ) չափիչների տեղադրում, որը թույլ կտա կրճատել առևտրային և տեխնիկական կորուստները և բարելավել մատակարարման հուսալիությունը: <p>Վարկի մի փոքր բաժինը կօգտագործվի գոյություն ունեցող կարճաժամկետ պարտավորությունների վերաֆինանսավորման համար, որոնք օգտագործվել են 2007-2008թթ. ներդրումային ծրագիրը ֆինանսավորելու համար:</p>
Անցումային շրջանի վրա ազդեցություն	<p>Անցումային շրջանի գործընթացների վրա ազդեցությունը գլխավորապես գալիս է</p> <ul style="list-style-type: none">ա) Հայաստանի էլեկտրաէներգիայի բաշխիչ համակարգում մասնավոր ներդրողի գործառնական արդյունավետության բարձրացումից,բ) շուկայական մեխանիզմները խթանող հաստատությունների, օրենքների և քաղաքականության հզորացումից ևգ) հաջող վերակառուցման դեմոնստրատիվ էֆեկտից:

Հաճախորդը	«Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ընկերությունը (ՀԵՑ), որի մեծամասնական սեփականատերը և վերահսկողն է հանդիսանում «ԻնտերՌԱՕ» (Ռուսաստանի Դաշնություն), և որը հանդիսանում է Հայաստանում էներգետիկայի բաշխիչ ենթակառուցվածքների և էլեկտրականության մատակարարման համար պատասխանատու ընկերությունը:
ՎՋԵԲ կողմից ֆինանսավորում	45 միլիոն եվրո կորպորատիվ առաջադաս վարկ ՀԵՑ-ին
Ծրագրի ընդհանուր արժեքը	52 միլիոն եվրո
Բնապահպանական ազդեցությունը	<p>Ծրագիրը գնահատվել է որպես B/1: Բանկի՝ Բնապահպանական քաղաքականությանը համապատասխան, բնապահպանական ուսումնասիրություն է իրականացվում՝ որպես ընդհանուր ուսումնասիրության մաս: Բնապահպանական ուսումնասիրության նպատակներն են.</p> <p>(ա) Ընկերության և նրա գործառնությունների բնապահպանական, առողջության պահպանման և անվտանգության՝ բարձր մակարդակի ուսումնասիրություն և գնահատում,</p> <p>(բ) Ծրագրի բնապահպանական վերլուծությունը,</p> <p>(գ) Ծրագրի սոցիալական գնահատումը և</p> <p>(դ) Բնապահպանական, առողջության պահպանման և անվտանգության գործողությունների ծրագրի (ԲԱԱԳԾ) նախագծի մշակումը:</p> <p>ԲԱԱԳԾ–ի իրականացումը հնարավորություն կտա Ընկերությանը համապատասխանել Հայաստանի՝ բնապահպանական, առողջության պահպանման ու անվտանգության օրենքներին ու կանոնակարգերին և մշակել ու զարգացնել լավագույն պրակտիկա:</p> <p>Նախատեսվող ներդրումային ծրագիրը նաև թույլ կտա ունենալ էներգետիկ արդյունավետության զգալի շահումներ, ինչպես նաև բարելավել համակարգի անվտանգությունը Ընկերության անձնակազմի և հանրության համար:</p>
Տեխնիկական համագործակցություն	<p>Տեխնիկական համագործակցություն՝ աջակցելու Կարգավորողին ձևակերպել շուկա երկրորդ տնտեսվարող սուբյեկտի մուտքի կարգավորման ռազմավարությունը:</p> <p>Տեխնիկական համագործակցության միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի ուղղությամբ խորհրդատվական ծառայությունների գծով հնարավորությունների համար այցելեք procurement of consultants :</p>

Ընկերության կոնտակտ անձ Պ. Եվգենի Գլադունչիկ
Գլխավոր տնօրեն
Հեռ.: + 374 10 650086
Ֆաքս: + 374 10 655457
Էլ. փոստ: armelnet@gmail.com
Կայք: www.ena.am

ՎՋԵԲ կոնտակտ անձ Լորան Շաբրիե, Գործարքի ղեկավար. chabriel@ebrd.com

Գործարար
հնարավորություններ Գործարար հնարավորությունների կամ գնումների գծով
մատակարարման համար դիմել հաճախորդ
ընկերությանը:

Ընդհանուր հարցումներ ՎՋԵԲ ծրագրերին առնչվող հարցումներ (ոչ կապված
գնումների համար մատակարարման հետ).
Հեռ.: +44 20 7338 7168; Fax: +44 20 7338 7380
Էլ. փոստ: projectenquiries@ebrd.com

Ծրագրերի ամփոփիչ փաստաթղթերը ստեղծվում են մինչև ՎՋԵԲ Տնօրենների խորհրդի կողմից քննարկումը: Ծրագրի մանրամասները կարող են փոխվել Ծրագրի ամփոփիչ փաստաթղթի հրապարակումից հետո: Ծրագրերի ամփոփիչ փաստաթղթերը չեն կարող դիտվել որպես ՎՋԵԲ-ի պաշտոնական քաղաքականությունը ներկայացնող: